Գրադարանավարի օրվա կապակցությամբ ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքի խոսքը՝ ՀՊՏՀ գրադարանի աշխատակիցներին

ՀՊՏՀ գրադարանի հարգելի' աշխատակիցներ, շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ Գրադարանավարի օրվա կապակցությամբ: Գրադարանավարի օրը լավ առիթ է ևս մեկ անգամ անդրադառնալու գրքի արժեքին և գրադարանավարի գործի կարևորությանը: Ուզում եմ նշել, որ չնայած մեր օրերում համացանցի և տեխնիկայի զարգացմանը՝ գիրքն ուրույն տեղ ունի մեր կյանքում: Գրքի արժեքը չի կարող և չպետք է խամրի բոլորիս՝ այդ թվում Ձեր՝ գրադարանի աշխատակիցների՝ այդ գործի նվիրյալների համառ ջանքերի շնորհիվ: Մրցակցության ներկայիս պայմաններում Ձեր ջանքերի շնորհիվ նաև պետք է բարձրացվի գրքի դերն ու նշանակությունը: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ Ձեզ և ցանկանում աշխատանքային հետագա հաջողություններ:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հարգանքով՝ ՀՊՏՀ ռեկտոր
Կորյուն Աթոյան

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝+37410 521720
Ֆաքս՝+37410 528864, Էլ-փոստ՝info@asue.am, www.asue.am